



ԵՂԵԳՆԱԶՈՐԻ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին Եղեգնաձորի բնապահպանական տեղեկատվական հասարակական Օրհուս կենտրոնը (այսուհետ Եղեգնաձորի Օրհուս Կենտրոնը) շարունակել է իր գործունեությունը՝ առաջնորդվելով Օրհուսի կոնվենցիայով (տեղեկատվության, մատչելիություն, հասարակության ներգրավվածություն որոշումներ կայացնելու գործընթացում և արդարադատության մատչելիություն):

Հաշվետու ժամանակահատվածում Եղեգնաձորի Օրհուս Կենտրոնը իրականացվող ծրագրի նպատակներին համահունչ մշակել գործունեության աշխատանքային ծրագիր, հաշվի առնելով տարածաշրջանի բնապահպանական առանձնահատկությունները և առկա իրողությունները:

Կենտրոնը շրջակա միջավայրի առնչությամբ կարևոր որոշումների կայացման գործընթացի և ոլորտային հիմնախնդիրների վերաբերյալ իրականացրել է իրազեկում 6 հանրային լսումների վերաբերյալ:

ՏԻՄ-երի և մարզպետարանների մի քանի աշխատակիցների համար կազմակերպվել է իրազեկման միջոցառումներ՝ ազգային օրենսդրության և Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման և դրանց համաձայնեցման վերաբերյալ: Կողմերը կարևորել են հանրության մասնակցության և տեղեկատվության մատչելիությունը, որպես բնապահպանական որոշումների կայացման բաղկացուցիչը հանգամանք:

Կենտրոնը աջակցել և խթանել տեղական ՔՀԿ-ների միջև համագործակցությանը և գործընկերային հարաբերությունների ձևավորմանը՝ տեղական և ազգային մակարդակներում, մասնավորապես ՄԱԿ-ի ԳԷՖ ծրագրի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ներկայացվել է ՄԱԿ-ի ԳԷՖ ծրագիրը, մշակվել ապագա

նազանավարության ծրագրի մարզի և ազգային մակարդակներում:



Ամրապնդվել են համագործակցից կառույցների և կազմակերպությունների հետ կապը, արդեն նոր համագործակցություն ունենք Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման>>

ՀԿ Եղեգնաձորի Քաղաքացիական երիտասարդական կենտրոնի հետ:

Կենտրոնում հանդիպում է տեղի ունեցել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Քննարկվել է Վայոց ձոր մարզում որսագողության, մարզում որսորդության կազմակերպման կարգի, և Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակների հավաքման հարցերը: Կենտրոնի կողմից արվել են առաջարկներ որսագողության վերահսկման և նվազեցման վերաբերյալ, և բնակչության շրջանում իրազեկում Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակների հավաքման վերաբերյալ:

Եղեգնաձոր Օրհուս Կենտրոնում հանդիպել են Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, ԱՄՆ ՄԶԳ Երևանյան գրասենյակ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի ներկայացուցիչների հետ մարզի տեղեկտվական համակարգի զարգացման հանրավորությունների, քաղաքացիական հասարակության կառույցների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման նպատակով: Առաջարկվել է մարզում ստեղծել մեդիա ակումբ կամ կենտրոն մեդիա դաշտը ձևավորելու և զարգացելու նպատակով:

Կենտրոնում կազմակերպվել է հանդիպում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ շրջակա միջավայրի երաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացում փոխհամագործակցություն ձևավորելու, արագ արձագանքման մեխանիզմներ քննարկելու, ապագայի համատեղ ծրագրեր քննարկելու նպատակով

Եղեգնաձորի Օրհուս Կենտրոնը իր մասնակցությունն է ունեցել մարզում, Հայաստանում կազմակերպված 6 գտարբեր միջոցառումներին:

Եղեգնաձորի Օրհուս Կենտրոնի կողմից ՀՀ պետական տարբեր կառույցներին ուղղարկվել է տեղեկատվության ստացման 3 հարցումներ:

ՏԻՄ-երի ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար Օրհուսի կոնվենցիայի դրույթների վերաբերյալ իրազեկման դասընթացներ են անցկացվել Վայքի քաղաքապետարանում և «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ՀԿ-ում ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում, Աղնջաձոր համայնքում, որին իրենց մասնակցություն են ցուցաբերել 51 հոգի:



Եղեգնաձորի Օրհուս կենտրոնը Վայք քաղաքի համայնքային կենտրոնում ցուցադրել է հանքարդյունաբերության թեմայով «Բնության հաշվեհարդար» ֆիլմը և «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ՀԿ-ում «Հայաստանին սպառնացող աղետները» ֆիլմը, որին իրենց մասնակցություն են ցուցաբերել 32 հոգի, :



Եղեգնաձորի Օրհուս Կենտրոնի կողմից պետական մարմինների ներկայացուցիչների, ուսանողների, աշակերտների համար Վայք և Եղեգնաձոր քաղաքներում ներկայացվել է շնորհանդես աղետների ռիսկերի նվազեցմանը վերաբերող օրենսդրական դաշտը, որին իրենց մասնակցություն են ցուցաբերել 32 հոգի



Կատարվել է Եղեգնաձորի Օրհուս Կենտրոնի Փորձագետների խորհուրդի կազմի փոփոխություն, հաստատվել է Փորձագետների խորհուրդի անդամների նոր կազմը: 1 նագամ տեղի է ունեցել հանդիպում փորձագետների խորհրդի նախագահի հետ առաջիկա ծրագրերի քննարկման նպատակով:

Եղեգնաձորի Օրհուս Կենտրոնի գրադարանն ու տեխնիկական միջոցներն հասանելի են եղել կենտրոնի այցելուների և հետաքրքրվածությունն ցուցաբերածների համար: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտվել են 11 այցելուներ:

Եղեգնաձորի Օրհուս Կենտրոնի գործունեության մանրամասն հաշվետվությունն ըստ օրերի, ամիսների կարող էք տեսնել կենտրոնի կողմից ներկայացված վիճակագրական հաշվետվության մեջ: Ինչպես նաև www.aarhus.am կայքում կարող էք գտնել կենտրոնի կողմից պատրաստված հոդվածներ և այլ նյութեր:

Հաշվետվությունը կազմեցին՝

Եղեգնաձորի Օրհուս Կենտրոնի համակարգողներ՝

Մարիամ Մկրտչյան, Հրաչ Քոչարյան

Հասցե. ՀՀ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. 093 958806 077 77 81 99

E-mail: mkrtyan.mariam7@gmail.com hrachqocharyan@mail.ru

info_yeghegnadzor@aarhus.am